ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2015, 12 – Լ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգով», Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննարկելով գնահատման արդյունքների ամփոփմանը զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության հարցը,

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝

2015 թվականի փետրվարի 26-ին և 27-ին Հանձնաժողովը անցկացրել է հարցազրույցի փուլը, որին մասնակցել են 14 հավակնորդներ:

Հարցազրույցի փուլին անմիջապես պետք է հաջորդի մասնակիցների գնահատման գործընթացը:

Հանձնաժողովը գտնում է, որ մասնակիցների գնահատման գործընթացին չեն կարող մասնակցել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Նախագահի 02.08.2014թ. թիվ ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի գործունեությունը հիմնված է թեկնածուների ընտրության պայմանների հավասարության, ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ Մրցույթի հարցազրույցի փուլին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան:

Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 2-Լ որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում հայաստանի հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 9-րդ կետի համաձայն՝ Զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են մասնակցել մրցույթի հարցազրույցի փուլին, եթե հարցազրույցի օրից առնվազն երկու օր առաջ համապատասխան դիմում ներկայացնեն աշխատակազմին:

Հանձնաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, դրա բաշխումը, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը, ինչպես նաև գնահատման եվ միավորների հաշվարկման կարգը սահմանելու մասին» 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 3-Լ որոշման 10-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի գնահատումն իրականացնում է բոլոր մասնակիցների հարցազրույցներն ավարտելուց հետո:

Վերոհիշյալ կանոններից հետևում է, որ զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հարցազրույցին, մինչդեռ հարցազրույցն ավարտվել է և հանձնաժողովը պետք է անցնի գնահատման գործընթացին, որին ի դեպ կարող են մասնակցել միայն հարցազրույցի փուլում Հանձնաժողովի նիստին ներկա Հանձնաժողովի անդամները:

Հանձնաժողովն արձանագրում է , որ հարցազրույցի փուլին հնարավորություն է տրվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին անկաշկանդ իրացնել իրենց իրավունքները: Ավելին, հարցազրույցի փուլն ամբողջությամբ տեսաձայնագրվել է, իսկ Հանձնաժողովի որոշումները, այդ թվում գնահատման արդյունքում ընդունվելիք որոշումն ենթակա է սահմանված կարգով հրապարակման:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Արձանագրել, որ գնահատման արդյունքների ամփոփմանը զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը սահմանված կարգով նախատեսված չէ:

Հանձնաժողովի նիստը վարող Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ